

ԳՈՒՐԳԵՆ ԳՐԻԳՈՐԻ ՍԵՎԱԿ

Հանրապեաության գիտական հասարակայնությունը ծանր կորուսա կրց-
գախճանվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, բա-
նասիրական գիտությունների դոկտոր, Հայկական ՍՍՀ և Վրացական ՍՍՀ գի-
տության վասարակավոր զործիլ, պրոֆեսոր Գուրգեն Գրիգորի Սեվակը (Գրիգոր-
յան):

Գ. Գ. Սեվակը ծնվել է 1904 թվա-
կանի ապրիլի 15-ին Թբիլիսիում,
բանվորի ընտանիքում: 1924 թվակա-
նին ավարտել է Ներսիսյան դպրոցը
և ընդունվել Երևանի պետական հա-
մալսարանի պատմազրական ֆիլոլո-
գիական բաժնում: 1929 թվականին՝
ասսիրան-
տուրա: 1931 թվականից մինչև 1971 թվականը լեղվարանական տարրեր ա-
ռարկաներ է դասավանդել Երևանի աե-
ասական համալսարանում: 1941 թվա-
կանից մինչև 1971 թվականը անփո-
փոխ դեկան է Համալսարանի հա-
յոց լեզվի ամբիոնը, 1932 թվականից
մինչև 1940 թվականը նզել է ուժ տա-
կան տերմինարանական կոմիտեի գի-
տական քարտուղարը, 1969 թվակա-
նից՝ Հայկական ՍՍՀ գիտություն-
ների ակադեմիայի նախադահության
առջնթեր դիտատեխնիկական տերմինարանության խորհրդի նախագահը:
1947 թվականից աշխատել է Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտու-
տում որպես ժամանակակից հայոց լեզվի բաժնի վարիչ, այնուհետև որպես
աւերմինարանության և խոսքի կուլտուրայի բաժնի վարիչ: 1956 թվականին
ընտրվել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ,
իսկ 1971 թվականին՝ ակադեմիկոս:



Գ. Գ. Սեվակը ժամանակակից հայոց լեզվի առավել հայտնի մասնագետ-
ներից մեկն էր: Նա մեծ ավանդ է ներդրել լեզվագիտության տեսական պրոբ-
լեմների մշակման գործում, մասնավորապես խոսքի մասերի տեսության մեջ,
ինչպես նաև ժամանակակից հայոց լեզվի պատմության ու տեսության, ոճա-
րանության, տերմինարանության, խոսքի կուլտուրայի և գրական լեզվի նոր-
մավորման հարցերի մշակման մեջ: Առանձնապես մեծ համբավ է նվաճել
նրա «Հայոց լեզվի շարահյուսություն» դասագիրքը, որով սովորել են Հայ-

դպրոցականների շատ սերունդներ և որը մինչև օրս չի կորցրել իր գիտական ու գործնական նշանակությունը:

Գ. Գ. Սևակը հայոց լեզվի և բանասիրության կարևոր հարցերին, հայ-վրացական մշակութային ու լեզվական կապերին նվիրված մի շարք մենագրությունների և բազմաթիվ հոդվածների հեղինակ է: Նրա «Ժամանակակից հայոց լեզվի գասընթացը», «Ժամանակակից հայոց լեզվի համառոր պատմություն», «Մեսրոպ Մաշտոց» և այլ աշխատություններ բարձր են գնահատվել զիտական հասարակայնության կողմից: Լինելով լայն հետաքրքրությունների տեր գիտնական, Գ. Գ. Սևակը գրադպում էր նաև թարգմանության տեսությամբ և թարգմանչական ստեղծագործական գործունեությամբ: Նրա գրչին է պատկանում Ա. Ս. Պուշկինի «Եվգենի Օնեգինի» թարգմանությունը:

Գ. Գ. Սևակը աշխարհի ամենահայտնի էսպերանտիստներից մեկն էր, էսպերանտիստների համաշխարհային ակադեմիայի անդամ, Հայաստանում այդ լեզվի ակտիվ պրոպագանդիստը: Նա մեծ աշխատանք է կատարել հայ դասական գրողների ստեղծագործությունները էսպերանտո լեզվով ներկայացնելու ուղղությամբ:

Նա զիտական արդյունավետ գործունեությունը զուգակցում էր ակտիվ հասարակական ու մանկավարժական աշխատանքի հետ: Նրա ղեկավարությամբ թեկնածուական գիսերտացիաներ են պաշտպանել մոտավորապես հրկու տասնյակ ասպիրանտներ: Նրա աշակերտներից շատերը ներկայում գիտությունների դոկտորներ են: Գ. Գ. Սևակը շատ շանք էր նվիրաբերում հասարակական աշխատանքին, խոսքի կուլտուրայի հարցերով հաճախակի ելույթ էր ունենում ուղիղով ու հեռուստատեսությամբ, զանազան տերմինարանական և մեթոդական խորհուրդների ակտիվ անդամ էր:

1961 թվականին նրան շնորհվեց Հայկական ՍՍՀ, իսկ 1967 թվականին՝ Վրացական ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում: Նա բազմիցս պարգևատրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրերով:

Սովետահայ գիտության և մշակութի մեջ մեծ ավանդ ներդրած խոշոր գիտնականի հիշատակը ընդմիշտ կմնա մեր սրտերում:

Կ. Ս. Դեմիրենյան, Բ. Ե. Սարկիսով, Ֆ. Տ. Սարգսյան, Գ. Ն. Աճեղբեե, Կ. Լ. Դալլաքյան, Վ. Բ. Ղալումյան, Կ. Հ. Ղամբարյան, Լ. Ն. Ներսիսյան, Լ. Ս. Շուակո, Հ. Մ. Ոսկանյան, Ս. Մ. Պետրոսյան, Մ. Բ. Արզումանյան, Գ. Ա. Հարությունյան, Գ. Ա. Մարտիրոսյան, Մ. Հ. Մուրադյան, Ս. Ա. Ցուգբաշյան, Լ. Գ. Սահակյան, Վ. Ա. Տուրյան, Հ. Մ. Բաղդասարյան, Ա. Մ. Կիրակոսյան, Հ. Ա. Հայրապետյան, Վ. Մ. Մովսիսյան, Ֆ. Գ. Պետրոսյան, Հ. Ս. Սաղյան, Ա. Ռ. Սպետլովա, Ս. Լ. Թումանյան, Վ. Հ. Համբարձումյան, Յ. Ի. Ղարիբջանյան, Ա. Ռ. Հալիմանյան, Վ. Ա. Ղարիբջանյան, Գ. Բ. Ղարիբջանյան, Գ. Բ. Զահորուկյան, Ա. Բ. Կարինյան, Ա. Տ. Զովուտյան, Գ. Բ. Ղարիբջանյան, Գ. Բ. Զահորուկյան, Ա. Բ. Կարինյան, Ա. Տ. Ղարիբջանյան, Կ. Բ. Աղայան, Ա. Ա. Արքանամյան, Է. Մ. Զրբաշյան, Վ. Ս. Նալբանդյան, Ն. Ա. Պառեասյան